

ՏԱՐԲԵՐԱԿԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՄԱՐԺԵՔՈՒԹՅՈՒՆԸ ԼԵԶԿԻ ԲԱՌԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Տարբերակայնության հարցը վաղուց գոյություն ունի լեզվաբանության մեջ և այսօր էլ լիարժեք կերպով ուսումնասիրված չէ՝ թե տեսական, և թե՝ գործնական առումով: Քանի որ մինչ այժմ տարբերակայնության նկատմամբ միասնական մոտեցում գոյություն չունի, լեզվաբանները, առանձնացնելով դրա տարբեր տիպերը, առաջարկում են իրարամերժ չափանիշներ: Ամանդական գերմանագիտությունը, ընդունելով հանդերձ բառի հնչյունական, ձևաբանական և այլ կարգի տարբերակները, հիմնականում մերժում էր բառա-իմաստային տարբերակի գաղափարը: Ինչպես, օրինակ, Կ.Լևկովսկայան, քննարկելով տարբեր բառային տիպերը, նշում է, որ հոմա-միշի հասկացությունը ծածկում է տարբերակի գաղափարը:¹ Ասվածը, կարծում ենք, իրավացի է միայն բառի բովանդակային կողմի տեսանկյունից, որտեղ գործ ունենք հոմանիշության խնդրի հետ: Եթե տարբերակայնության հարցը փորձենք քննարկել ըստ բառի արտահայտության կողմի, ապա ակնհայտ է, որ այն խաչաձևվում է հոմանիշության հետ: Այդ պատճառով հստակ կերպով պետք է առանձնացնել տարբերակայնությունը բառի բովանդակության պլանում, որի սահմանը համանունությունն է և տարբերակայնությունը արտահայտության պլանում, որի սահմանը հոմանիշությունն է: Այս առումով որպես քննարկման նյութ կարելի է վերցնել գերմաներենի բարդ ածանցավոր բառերը, ինչպես նաև տարբեր կարգի հապավական ձևերը:

Հաշվի առնելով քննարկվող խնդրի վերաբերյալ մինչ այժմ գոյություն ունեցող տարբեր տեսակետները, կարելի է առանձնացնել տարբերակայնության սահմանման համար անհրաժեշտ հետևյալ չափանիշները.

- 1) ուսումնասիրվող բառային միավորների ընդհանուր բովանդակային նշանակությունը:
- 2) Բառակազմական նույն մակարդակը կամ բառակազմական միամակարդակ կաղապար:
- 3) Կառուցվածքային անփոփոխակը, որը ներկայացնում է հիմնական իմաստակիր բաղադրիչը:

¹ Lewkowskaja K. A., Lexikologie der deutschen Gegenwartssprache, M., 1968, էջ 171:

Այսպիսով, բառային տարբերակայնության սահմանման համար գոյություն ունեն երկու հնարավորություններ. կարելի է բառը քննարկել իր ամբողջության մեջ՝ վերլուծելով ամբողջ իմաստային կառուցվածքը և այդ ձևով անդրադառնալ տարբերակայնությանը, եթե բոլոր իմաստները լրիվ համընկնում են կամ էլ, եղած տարբերակները դիտարկել որպես առանձին բառեր, որոնք ըստ իմաստի համընկնում են միայն մասամբ՝ երկու այլ տվյալների համընկնման պայմանով: Վերջին դեպքում նկատի է առնվում տարբերակայնությունը կառուցվածքում և բառակազմական կաղապարի նույն մակարդակը: Կարծում ենք, որ առավել արդյունավետ կարող է լինել երկրորդ մոտեցումը, քանի որ այն ընդլայնում է բառային տարբերակի հասկացության ոլորտը:

Անդրադառնալով տարբերակայնության սահմանման վերոհիշյալ չափանիշներին, կարող ենք ասել, որ դրանցից առաջինը պետք է համարել հիմնական, քանի որ բովանդակության ընդհանուր պլանի բացակայության դեպքում կունենայինք տարբեր բառեր, իսկ մասնակի տարբերությունների դեպքում՝ հոմանիշ ձևեր:

Երկրորդ չափանիշը ենթադրում է նույն մակարդակի առկայություն՝ բառակազմական համապատասխան կաղապարի տեսակետից: Այսինքն՝ քննարկվող ձևերը պետք է գտնվեն բառակազմական նույն մակարդակում, ինչպես, օրինակ, ածանցավոր գոյականը կարող է լինել միայն նույն կարգի բառի տարբերակ, իսկ բարդ գոյականը՝ բարդ գոյականի, կիսաածանցավորը՝ կիսաածանցավորի և այլն: Նշված սկզբունքից շեղում հնարավոր է միայն այն դեպքերում, երբ տարբերակայնությունը առաջանում է առանձին բարդ բառերի կրճատմամբ, որի արդյունքում ունենում ենք հապավական կառուցվածք:

Երրորդ չափանիշը, որը ենթադրում է տարբերակի առկայություն կառուցվածքում, նույնպես կարելի է դիտել որպես պարտադիր նախապայման, քանի որ հակառակ դեպքում խոսք կարող է լինել միայն հոմանիշության մասին: Հարկ է նշել, որ տվյալ դեպքում կարևոր է այն մոտեցումը, որ կառուցվածքային անփոփոխակը դրսևորվում է միայն հենքային բաղադրիչների մոտ, որոնք բարդ բառերի հիմնական իմաստի կրողներն են: Այսպես, օրինակ, գերմաներենի Angstpeter – Angsthase («վախկոտ» իմաստով) գույգի մոտ առաջին angst բաղադրիչը հիմնական իմաստի կրողն է, որն էլ այստեղ կլինի իմաստային անփոփոխակը: Իսկ եթե վերցնենք Tränensuse – Heulsuse («լացկան» իմաստով) գույգը, ապա, նկատի ունենալով, որ այստեղ հիմնական իմաստի կրող առաջին բաղադրիչները (tränen- և heul-) տարբեր բառային միավորներ են, կառուցվածքային անփոփոխակի սահմանումը հնարավոր չէ: Այսինքն բովանդակային կողմի համընկնման դեպքում կառուցվածքային անփոփոխակի

առկա-յությունը ենթադրում է նաև ընդհանուր բառակազմական կաղապար, իսկ հանընկնոդ ձևերն էլ կլինեն տարբերակներ, ինչպես՝ Angstpeter –Angsthase, իսկ Tränensuse – Heulsuse զույգի դեպքում ունենք միայն հոմանիշ ձևեր:

Հետևաբար միայն վերոհիշյալ բոլոր պայմանների դեպքում է առաջանում տար-բերակայնություն արտահայտության պլանում: Ընդ որում այստեղ կարելի է առանձնացնել նաև, այսպես կոչված, «սահմանային շերտ», որի մեջ մտնում են ընդհանուր բովանդակային կողմով բառային միավորները և որոնք անփոփոխակներ են ըստ կառուցվածքի, սակայն նաև տարբեր՝ ըստ բառակազմական կաղապարի: Տվյալ դեպքում նկատի ունենք բարդ գոյական – կիսածանցավոր գոյական, ածանցավոր գոյական, միանշանակ բառեր՝ այս-կամ այն բաղադրիչի կրճատմամբ, գոյականացված դերբայ և այլ կարգի հակադրվող կաղապարները, ինչպես՝ Aufwartefrau –Aufwärterin «սպասուհի», Stockwerk – Stock «հարկ», Todefeind – Erzfeind «ոխերին թշնամի» և այլն:

Տարբերակայնության առկայությունը սահմանվում է փոփոխվող միավորների միանման իմաստային բաղադրիչներով, իսկ տարբերությունները կարող են վերաբերել միայն ոճական կողմին (եթե խոսքը ոճական տարբերակների մասին է): Տվյալ խմբի մեջ են մտնում նաև բարբառային տարբերակները, որոնք անցել են գրական լեզվին և ունեն ոճական բաղադրիչներ, ինչպես, օրինակ, Mädel ձևը՝ ավելի մտերմիկ է և անմիջական քան ոճաբանորեն չեզոք Mädchen ձևը՝ «աղջիկ» իմաստով:

Հիմնականում բանաստեղծական խոսքում գործածվող գերմաներենի Friede և Haufen ձևերը ավելի բարձր ոճի են, քան Frieden և Haufen տարբերակները: Իսկ ար-մատական –feind ձևային հիման վրա կազմված Erzfeind և Urfeind բառերի erz- և ur- նախածանցները նույն իմաստի ուժեղացման միջոցներն են հանդիսանում: Այդպիսով, ընդհանուր արմատական ձևային դեպքում այդ բառերը ունեն հոմանիշ նախածանցներ, որոնք չեն փոխում դրանց հիմնական իմաստը և որը հնարավորություն է տալիս դրանք դիտել որպես տարբերակային ձևեր:

Մի շարք դարձվածքային արտահայտություններ նույնպես ունեն բովանդակության ընդհանուր պլան, կառուցվածքային անփոփոխակ և բառակազմական կաղապարների միևնույն մակարդակը, ինչպես՝ das kam wie ein Blitzstrahl (Blitzschlag) aus dem Himmel կամ den Mund (das Maul, die Klappe, die Fresse, die Schnautze) halten, ինչպես նաև՝ sich den Kopf (das Him) zergrübeln, j-n auf dem (in) Genick sitzen և այլն:

Որպես տարբերակային ձևեր կարելի է դիտել նաև առանձին հապավումներ և հապավական կազմություններ, որոնք ունեն խոսակցական լեզվի տարբեր

ոճական երանգավորումներ. հմմտ. Uni – Universität, Auto – Automobil, Abi – Abitur, Ober – Oberkellner և այլն, որոնք ավանդական մոտեցմամբ համարվում են հոմանիշ ծևեր: Մինչդեռ, նկատի ունենալով, որ նշված ծևերը առաջացել են ամբողջական բառերի կրճատմամբ և ներառում են հիմնական անփոփոխակը, այդ նորակազմությունները կարելի է համարել լիովին ինքնուրույն ծևեր, որոնք կրճատված մասից անկախ են: Ընդ որում այդ կերպ առաջացած մի շարք ծևեր կարող են մասնակցել հետագա կազմությունների ձևավորմանը, ինչպես Autobahn, Autofell, Autostrasse և այլն, ինչը հաստատում է այդ բառերի իֆքնությունությունը: Նույն մոտեցմամբ կարելի է տարբերակային ծևեր համարել մի շարք նույնաբանական բարդություններ և դրանց համա-պատասխան պարզ կամ ածանցավոր կազմություններ, ինչպես, օրինակ der Marmor-stein – der Marmor, das Tigertier – der Tiger, der Enkelsohn – der Enkel, der Ziegelstein – der Ziegel, der Haifisch – der Hai և այլն: Հարկ է նշել, որ բաղադրյալ կազմությունները իրենց հնաբանական բնույթի պատճառով ակնհայտորեն ոճական երանգավորում ունեն, ինչը բնորոշ չէ պարզ ծևերին և առաջին տիպի կազմությունների երկրորդ բաղադրիչը իմաստային առումով փոփոխություններ չի ենթադրում բացառությամբ ոճականի:

Անդրադառնալով տարբերակայնության և համարժեքության հասկացությունների փոխհարաբերությանը, կարելի է ասել, որ մինչ օրս այդ խնդիրը վերջնականապես իր լուծումը չի գտել: Առավել տարածված է այն մեկնաբանությունը, որ համարժեքության դեպքում խոսքային մեկ միավորը համապատասխանում է մյուսին ըստ գործառույթի և երբ երկուսն էլ խոսքում ի վիճակի են կատարել նույն գործառույթը:¹ Այս մոտեցմամբ համարժեքության համապատասխան ըմբռնումը կարելի է տարածել թե նախադասությունների, թե ոճական հոմանիշների, թե ժամանակաձևային հոմանիշների և թե այնպիսի հոմանիշ ծևերի վրա, որոնցից մեկը բնիկ բառ է, իսկ մյուսը փոխառյալ: Այսինքն «համարժեքություն» հասկացությամբ բացատրվում են միաժամանակ շարահյուսական, ձևաբանական և բառագիտական երևույթներ, որի պատճառը տվյալ տերմինի բազմիմաստությունն է: Այս հանգամանքի հաշվառումով, կարելի է փորձել ավելի նեղ ըմբռնմամբ ներկայացնել համարժեքությունը գործադրելով այդ հասկացությունը այնպիսի տարիմաստ միավորների համար, որոնք օժտված են միևնույն կառուցվածքային անփոփոխակով և պատկանում են լեզվի տարբեր մակարդակներին բառային կամ շարահյուսական: Միևնույն ժամանակ պարտադիր չէ դրանց հատկացումը տարբեր տիպի բառակազ-

¹ Erben J., Deutsche Grammatik. Ein Abriss, München, 2001, S. 119

մական կաղապարներին: Այդ դեպքում համարժեք ձևեր կարելի է դիտել բաղադրյալ բառերն ու բառակապակցությունները, որոնք բաղկացած են լեզվի տարբեր մակարդակային միավորներից և որոնք բովանդակության պլանի պարտադիր ընդհանրությամբ համընկնում են իրենց բառային կազմով: Դրա հիման վրա հնարավոր է տարբերակել համարժեքության հետևյալ տիպերը.

1. Բարդ գոյականներ և բառակապակցություններ, որոնք կազմված են համապատասխան գոյականների հենքային ձևերից՝ բաղադրիչ տարրերի շարադասական փոփոխությամբ, ինչպես՝ *die Mondsichel* – *die Sichel des Mondes*, *die Wohnungsmitte* – *die Mitte der Wohnung* և այլն:

2. Բարդ գոյականներ և բառակապակցություններ, որոնք կազմված են համապատասխան գոյականների հենքային ձևերից՝ առանց բաղադրիչների շարադասական փոփոխությունների, ինչպես՝ *Rotwein* – *roter Wein*, *Schwarzbrot* – *schwarzes Brot* և այլն:

3. Տեղաշարժեր՝ համապատասխան բառակապակցական արդյունքով. հմմտ. *Langeweile* – *lange Weile*, *Freundfeind* – *Freund (und) Feind*:

4. Բաղադրիչի կրճատմամբ առաջացած բարդ ձևեր և համապատասխան բառակապակցություններ, ինչպես՝ *Intervision* – *internationale Vision*.

Համարժեքության այս չորս տիպերին կարելի է միացնել նաև լրիվ հապավում և համապատասխան բառակապակցություն զույգը, ինչպես՝ *ESZB* – *Eurpäisches System der Zentralbanken*, *BIGA* – *Bundesamt für Industrie, Gewerbe und Arbeit*, *RAW* – *Rationalisierungsausschuss der deutschen Wirtschaft* և այլն: Ընդ որում այստեղ էլնում ենք այն դրույթից, որ ցանկացած հապավում իրենից ներկայացնում է ամբողջական ձևավորմամբ, իսկ դրանց համապատասխան բառակապակցությունները առանձնակի ձևավորմամբ բառեր, այսինքն՝ համընկնելով ըստ բովանդակության կողմի, դրանք պատկանում են տարբեր լեզվական մակարդակներին: Այդպիսով տվյալ ձևերը իրենց բնույթով տարբերվում են տարբերակ-հապավումներից, որոնք (ինչպես, օրինակ, *HR* – *Handelsrat*) հատկացվում են լեզվի նույն մակարդակին:

Կարելի է նաև վերոհիշյալ համարժեքային հինգ ձևերից առաջին երեքը հատկացնել, այսպես կոչված, «սահմանային շերտին», որը գտնվում է տարբերակայնության և համարժեքության միջև, քանի որ դրանցում պահպանվում է բաղկացուցիչ տարրերի շարադասությունը և բառակապակցության կրճատված կառուցվածքը, իսկ նրանց պատկանելությունը լեզվի տարբեր մակարդակներին բացառում է տարբերակայնության հնարավորությունը:

Ինչպես վերը նշվեց, հոմանիշության հասկացությունը նույնպես կարելի է քննարկել և սահմանել տվյալ երեք սկզբունքների հիման վրա: Եթե փորձենք

միմյանցից առանձնացնել հոմանիշության, տարբերակայնության և համարժեքության հասկացությունները, ապա դրա համար որպես հիմնական չափանիշ պետք է դիտել լեզվի բառային և շարահյուսական մակարդակների տարբերակումը: Այդպիսով բառային տարբերակները կդիտարկվեն որպես միամակարդակային, իսկ համարժեք ձևերը՝ երկմակարդակային միավորներ և այդ հասկացությունները կհամընկնեն ընդհանուր բովանդակային պլանում իրենց կառուցվածքում ունենալով համապատասխան անփոփոխակը:

Համարժեքության և հոմանիշության տարբերակման հիմնական չափանիշը կլինի առաջինների մոտ կառուցվածքային անփոփոխակների պարտադիր առկայությունը և բովանդակության կողմի ընդհանրությունը, ինչը պարտադիր չէ հոմանիշության համար: Բացի այդ, հոմանիշ ձևերին բնորոշ է նաև բարդ բառերի և հենքային բառերի տարբերակումը՝ ըստ ձևահնչության կազմության, ինչպես նաև բառակազմական կաղապարների տարբեր լեզվական մակարդակների պատկանելությունը կամ բովանդակային կողմի որոշակի տեղաշարժը: Այսպես, օրինակ, գերմաներենի Rotwein և Roter Wein ձևերը, համատեքստից կախված, կարող են լինել ինչպես համարժեքներ, այնպես էլ հոմանիշներ (եթե ընդգծվում է գինու տեսակը): Անշուշտ, մի շարք դեպքերում բաղադրյալ ձևերը իմաստային առումով ավելի ամբողջական են և արտահայտում են մեկ հասկացություն, այն դեպքում, երբ բառակապակցությունը արտահայտում է երկու հասկացություններ, որոնք միմյանց նկատմամբ բնութագրվում են որոշչային հարաբերություններով, ինչպես, օրինակ Weinglas – Glas mit (für) Wein:

Անփոփոխվող նշենք, որ տարբերակայնությունը արտահայտության պլանում կարելի է հատկացնել լեզվի հիմնական բառաֆոնդին, որտեղ այն բնութագրվում է ոճաբանական, ձևաբանական և քերականական գործառույթներով: Ակնհայտ է նաև, որ տարբերակայնության սահմանները միշտ չէ, որ հստակորեն ուրվագծվում են և շատ դեպքերում դրանք համընկնում են համարժեքության ու հոմանիշության հետ, որն էլ վկայում է լեզվի համակարգում իմաստային և բառակազմական տարրերի շարժունակության մասին:

Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Յ Ո Ւ Ն

Admoni V.G., Der deutsche Sprachbau, 3.Aufl., Leningrad, 1977.

Behage! O., Die deutsche Sprache, 15.Aufl., Halle, 1998.

Brinkmann H., Die Zusammensetzung im Deutschen, Bonn, 1997.

Erben J., Deutsche Grammatik., Ein Abriss, 13. Aufl., München, 2001.

Jung W., Grammatik der deutschen Sprache, Leipzig, 1972.

Lewkowskaja K.A., Lexikologie der deutschen Gegenwartssprache, M., 1968.